ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌՈՒՄ ԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԵՆԿԱՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ*

ԻՍՐԱԵԼ ՉԱՐՆԻ

Այնքանով, որքանով հայ ժողովուրդն անկախ Հայաստանում շարունակում է վերականգնել իր ազգային ինքնատիպությունը և քաղաքական անկախությունը, դժվար չէ կանխատեսել մի քաղաքական սցենար, երբ հայ ժողովուրդը կարող էր քաղաքական թե տնտեսական շահեր քաղել, եթե համաձայնվեր ակտիվորեն չնշել հայերի ցեղասպանության զոհերի հիշատակը: Ուրեմն բնական է նախապես հարց տալ՝ հարկավո՞ր է արդյոք քննարկել այդօրինակ քաղաքականության նպատակահարմարությունը: Ակնհայտորեն՝ այդպիսի սցենար հնարավոր է, քանի դեռ Թուրքիան համառորեն հայերի ցեղասպանությունը բացառելու քաղաքականություն է վարում: Այնքան էլ դժվար չէ կազմել վարկածային մի սցենար, որով Թուրքիան հարևան Հայաստանին մի շատ գրավիչ առաջարկ անի, պայմանով, որ Հայաստանի կառավարությունը հրաժարվում է Հայոց ցեղասպանության խնդրով արարողություններից և հայտարարություններից: Մենք արդեն վկա ենք եղել գոնե մեկ դեպքի, երբ հայկական կառավարության մի նախարար մի քանի տարի առաջ առաջարկեց վարել մի այնպիսի քաղաքականություն, որը, Թուրքիայի հետ հարաբերությունների հնարավոր ընդլայնման հեռանկարով, կհոչակեր ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված արարողություններից և հայերին ոչնչացնելու պատմության դասավանդումից հրաժարում:

ՀՈԴՎԱԾ-ՆԵՐ

1982թ., երբ ես Թել-Ավիվում նախապատրաստում էի հոլոքոստի և ցեղասպանության խնդիրներով միջազգային կոնֆերանսի անցկացումը, մենք հարձակումների և կոշտ ճնշումների ենթարկվեցինք:

Մեզնից պահանջում էին, որպեսզի մենք կոնֆերանսի ծրագրից բացառենք բոլոր հայ մասնակիցներին և այն զեկու-

* Թարգմանված է հայերի համաշխարհային կոնգրեսի Ռուսաստանի հայերի միության "Вестник" հանդեսից (Մոսկվա, 2004թ. էջ 115-123):

ցումները, ուր բարձրացվում էր Հայոց ցեղասպանության հարցը: Այդ ճնշումն անամոթ կերպով գալիս էր իսրայելական կառավարության կողմից, որը գործում էր հայերի ցեղասպանության ընդունման դեմ Իսրայելին ամենաբարձր մակարդակով քաղաքական և դիվանագիտական բողոք ներկայացնող թուրքական կառավարության թելադրանքով: Իսրայելի կառավարությունը սկզբում փորձեց հայերի ցեղասպանության մասին զեկուցումների բացառմանը հասնել այն հիմնավորմամբ, որ խաղասեղանին է դրված հրեաների լուրջ շահերը: Երբ կառավարությունը տեսավ, որ մենք (Էլի Վիզելը, Շամալ Դավիդսոնը և ես) տեղի չենք տալիս, այն սկսեց վախեցնել, ճնշումներ գործադրել և սպառնալ՝ արգելել ընդհանրապես ողջ կոնֆերանսի անցկացումը, չնայած սա, փաստորեն, ժողովրդական պետության միջամտություն էր գիտական կոնֆերանսի անցկացմանը:

Մեր կառավարության, ինչպես նաև Ստամբուլից ինձ հետ հանդիպման եկած՝ Թուրքիայում բնակվող հրեաների ղեկավարի միջոցով ինձ հաղորդած՝ թուրքական կառավարության դիմումի մեջ սպառնալից ձևով ասվում էր այն մասին, որ եթե կոնֆերանսն ընդունի հայերի ցեղասպանության փաստը՝ *շատ հրեաներ կտուժեն*: Ես հայտարարեցի իմ գործընկերներին, որ եթե ես տեսնեի, որ ատրճանակ է դեմ տրված թեկուզ մեկ պոտենցիալ հրեա զոհի ճակատին, ես հանգիստ խղճով կհետաձգեի Հայոց ցեղասպանության քննարկումը, մինչև այդ հրեան լիներ լրիվ անվտանգ վիճակում, և այդ ժամանակ կրկին ամբողջ ուժով հրապարակային պայքար կծավալեի ի պաշտպանություն հայերի ցեղասպանության փաստի: Եվ միայն այն բանից հետո, երբ ես մանրամասնորեն տեղեկացա և խորհրդատվություններ անցկացրի մի շարք երկրների քաղաքագետների և պետական գործիչների հետ, եկա այն եզրակացության, որ մենք այդ սպառնալիքներին ենք ենթարկվել Թուրքիայի կողմից և ոչ թե հրեաների կյանքին ուղղակի վտանգի սպառնալիքի պատճառով: Եվ հենց այդ պատճառով ես պատմական որոշում ընդունեցի՝ հայտնել «Նյու Յորք թայմսին», որ մենք մտադիր ենք լրիվ կերպով պահպանել կոնֆերանսի ծրագիրը: Եվ մենք հաջողությամբ ի կատար ածեցինք դա, չնայած կրեցինք տարբեր բնույթի վնասներ: Իսրայելի կառավարությունն ըստ ամենայնի ամեն ինչ արեց, որպեսզի շրջափակի մեր ֆինանսները և մինչև կոնֆերանսի սկիզբը խանգարի այդ մասին մամուլում հաղորդումներով հանդես գալուն: Այդ կառավարությունն արգելեց կոնֆերանսի հանդիսավոր արարողությունը և դրա անցկացումը հոլոքոստի թանգարանում (որը կառավարական շինություն է): Մենք ստիպված էինք մեր կոնֆերանսն անցկացնել Թել-Ավիվի հյուրանոցներից մեկում:

Ես կարող եմ հասկանալ, որ որոշ պարագաներում, երբ խոսք է գնում մարդկանց անվտանգության մասին, կարող են պահեր լինել, երբ պետք է կոմպրոմիսի մեջ մտնել սատանայի հետ և մի ռազմավարություն ընտրել, որը ենթադրում է որոշ ժամանակ հետաձգել ճշմարտության համար մեր պայքարը: Բայց նույնիսկ այդ դեպքում մենք պետք է այնպիսի մարտավարություն ընտրենք, որը կօգնի առավելագույնս արագ և առավելագույնս հետևողականորեն հասնել մեր նպատակին՝ աջակցել անցյալում մեր կամ ուզածդ այլ՝ ցեղասպանության ենթարկված ժողովրդի ճշմարիտ պատմա-

կան հիշողության վերականգնմանը:

Ընդհանուր առմամբ ես գտնում եմ, որ ցեղասպանության ենթարկված բոլոր ժողովուրդները պարտավոր են, որպես ապագա սերունդների առջև պարտք, պահպանել իրենց զոհերի սուրբ հիշատակը և ըստ ամենայնի շարադրել հետապնդումների և սպանդի տեղի ունեցած փաստերը: Ավելին՝ ես գտնում եմ, որ մենք բոլորս, ովքեր ուզում են պայքարել մեր մոլորակի վրա քաղաքակրթության կատարելագործման համար, պետք է միավորվենք՝ հանուն բոլոր ցեղասպանությունների ստույգ պատմական փաստերի ընդունման: Ես ի նկատի ունեմ նաև այն դեպքերը, երբ մենք ինքներս հանդես ենք գալիս որպես մի ազգի ներկայացուցիչներ, որն իր հերթին, ցավոք, ցեղասպանություն է կատարել, և որ պետք է հասնենք նրան, որ մեր ժողովուրդն ընդունի իր իսկ կողմից այլոց պատճառած չարության գործողությունների համար պատասխանատվությունը: Անկեղծորեն ասած՝ ես քիչ երկրներ ու ժողովուրդներ գիտեմ, որոնք պատմության այս կամ այն փուլում չեն կատարել ցեղասպանության բնույթի արարքներ՝ նույնիսկ եթե իրենք իսկ եղել են ցեղասպանության զոհեր: Ես չեմ կարծում, որ բոլոր ժողովուրդների պատմությունը միանման է իրենց մեղքի աստիճանով, բայց ես գտնում եմ, որ մեր մոլորակի վրա ավելի արժանապատիվ և անվտանգ կյանքին տանող միակ ուղին լիարժեք ճշմարտության ընդունման ուղին է՝ այն բոլոր դեպքերում երբ ուզածդ վայրում մարդիկ իրենց մահկանացուն են կնքել ցեղասպանություն իրագործող այլ մարդկանց ձեռքով: Խեղաթյուրել ճշմարտությունը՝ նշանակում է ոչ միայն վիրավորանք հասցնել տվյալ զոհ-ժողովրդին: Դա նաև հարված է ողջ մարդկության առաջընթացին, որն այդքան անհրաժեշտ է մեզ:

Ցեղասպանության գործընթացի ուսումնասիրման կարևոր մասը պետք է կազմի այն փաստերի ի հայտ բերումը, որոնք հատուկ են ցեղասպանության տարբեր արտահայտություններին, այն նպատակով, որպեսզի մենք գիտենանք ինչպե՛ս հակազդել ցեղասպանությանը, ինչպե՛ս կանխարգելել այն, միջամտել առավել վաղ, որպեսզի կարողանանք օգնել պոտենցիալ զոհերին: Այս ձևով Ստեփան Ասատուրյանը Հայոց ցեղասպանության բացատրության համար կիրառեց ցեղասպանության վաղորոք կանխարգելման համակարգի մոդելը և ցույց տվեց, որ հայկական ցեղասպանությունն ունի նույնպիսի «գլոբալ կառուցվածք» ինչպիսին հրեաների հոլոքոստը:[1]

Կարծում եմ, որ հայերի ցեղասպանության զոհերի հիշատակը պետք է լինի հայ ժողովրդի քաղաքական գիտակցության կենտրոնում, նույնիսկ այն դեպքում, երբ այդ հիշողությունը պահանջում է խիզախության և հնարավոր քաղաքական «շահավետ» գործարքից հրաժարում: Ես կոչ եմ անում պահպանել հայերի ցեղասպանության զոհերի սուրբ հիշատակը՝ հանուն ինչպես հայերի, այնպես էլ այլ ժողովուրդների, հանուն մեր այս խելահեղ մոլորակի վրա առավել անվտանգ մարդկային քաղաքակրթության համար մեր ընդհանուր պայքարի:

Ցավոք շատ հաճախ ժողովրդավարության երկու խոշոր տերությունները, որոնց ես պատիվ ունեմ պատկանել (Իսրայելը՝ որտեղ ապրում եմ և ԱՄՆ-ն՝ ուր ծնվել եմ) չեն կատարել իրենց բարոյական պարտքը հայ ժո-

ղովրդի առջև: Ինձ առավել վրդովեցնում է հրեա ժողովրդի նմանատիպ պահվածքն այն դեպքում, երբ իմ ժողովուրդը ճաշակել է ցեղասպանության զոհեր լինելու ողջ սարսափը. դրա համար մենք բոլորս պետք է ըստ ամենայնի լինենք նվիրյալ համագործակիցներ այդ խնդրում:

Կարծում եմ՝ուրախալի նորություն է այն, որ մենք շահել ենք *առօրյա հրեական կյանքի* մակարդակում հայերի ցեղասպանության զոհերի հիշատակն անկեղծորեն հարգելու համար մեր պայքարը: Տարեց-տարի մեր մշակույթի գործիչները հանդես են գալիս հայերի ցեղասպանության մասին կարևոր հայտարարություններով, հրապարակվում են լուրջ հոդվածներ մամուլում: Կարճ ժամանակում մեր իսրայելյան կառավարության երկու նախարարներ հանդես եկան հայերի ցեղասպանության ընդունման մասին պաշտոնական հայտարարություններով, և չնայած դրանից հետո կառավարությունը կրկին վերադարձել է թուրքերի հանդեպ իր «*ռեալիստական քաղաքականության*» հիմնադրույթին, նախկինում՝ իսրայելյան կառավարության անունից Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հարգող վերոհիշյալ նախարարների հայտարարությունները չեն կարող մոռացվել: Հայերի ցեղասպանության մասին հեռուստահաղորդումների՝ երկար տարիներ տևած պետական անպատշաճ գրաքննությունից հետո մենք, ի վերջո, հնարավորություն ունեցանք իսրայելյան հեռուստատեսությամբ մի քանի բարձրարժեք փաստագրական ֆիլմեր դիտել՝ հայերի ցեղասպանության մասին: Ես կարող եմ հավաստել, որ ինչպես հասարակ իսրայելցիները, այնպես էլ հոլոքոստի գիտնական-մասնագետները, այնպիսիք, ինչպես օրինակ պրոֆեսոր Յեհուդա Բաուերը, հիմնականում արժանին են տալիս հայերի ցեղասպանության զոհերի հիշատակին:

Այդուհանդերձ, ինչպես հայտնի է, պետական քաղաքականության պրակտիցիզմը պաշտոնական Իսրայելին դրդում է աջակցել Թուրքիային՝ հայերի ցեղասպանության ժխտման խնդրում: Այսպես՝ Իսրայելի արտգործնախարար Շիմոն Պերեսը, ընդգծված կերպով վիրավորելով հայերի ցեղասպանության զոհերի հիշատակը, երկու անգամ հանդես եկավ պատմության խեղաթյուրմամբ. առաջին անգամ՝ 2001թ. ապրիլի 10-ի «Թերքիշ Դեյլի Նյուս» լրագրին տրված հարցազրույցում, երկրորդ անգամ, երբ 2002թ. փետրվարին Պերեսը վիրավորական ձևով պաշտպանեց Հայաստանում Իսրայելի դեսպանի հայտարարությունը, որը պնդում էր թե հայերի ցեղասպանությունը ոչ մի դեպքում չի եղել ցեղասպանության լայնածավալ իրադարձություն և չի կարող լինել նույնատիպ իրադարձություն, ինչպիսին հրեա ժողովրդի հոլոքոստն է:

Ահա թե ես առաջին անգամ՝ 2001թ. ապրիլի 11-ին, ինչպիսի նամակ հղեցի Պերեսին:

«Իսրայել, Երուսաղեմ, Իսրայել պետության Արտաքին գործոց նախարարություն. արտգործնախարար Շիմոն Պերեսին:

Հարգելի պարոն Պերես.

Ես իմ խորին հարգանքն եմ հայտնում Իսրայելի անվտանգության և զարգացման, խաղաղության գործում Ձեր մեծ ներդրման համար: Այուհանդերձ, շատ տարիների ընթացքում ես չեմ կիսում Ձեր դիրքորոշումը Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Նման է նրան,

որ Թուրքերի հետ շատ կարևոր հարաբերություններ զարգացնելու Ձեր ցանկության առիթով Դուք պատրաստ եք լռության մատնել 1915-1920թթ. հայերի ցեղասպանության խնդիրը: Երբ 1982թ. Դուք խորհուրդ էիք տալիս հայերի ցեղասպանության հարցը չմտցնել հոլոքոստի և ցեղասպանության առաջին միջազգային կոնֆերանսի օրակարգ, որը մենք անց էինք կացնում Թել-Ավիվում, ես որոշեցի տեղի չտալ արտգործնախարարության ճնշումներին, որը պնդում էր՝ հանել հայերի ցեղասպանության մասին զեկուցումները կամ ընդհանրապես՝ չկայացնել կոնֆերանսը:

Ինձ թվում է, դատելով Անկարայի լրագրի հաղորդումից, Դուք անցել եք բարոյական այն սահմանը, որը ոչ մի հրեա չպետք է իրեն թույլ տա անցնել: Դուք, ինչպես հաղորդվում է, հայտարարել եք. «Մենք մերժում ենք հոլոքոստի և հայերի պնդումների միջև նմանություն տեսնելու փորձերը: Հոլոքոստին նմանօրինակ ոչինչ տեղի չի ունեցել: Հայերը ողբերգություն են ապրել, բայց՝ ո՛չ ցեղասպանություն»:

Ի գիտություն Ձեզ՝ 2000թ. Ֆիլադելֆիայում կայացած հոլոքոստի կոնֆերանսում, հոլոքոստի բազմաթիվ հետազոտողներ, ներառյալ իսրայելյան պատմաբանները, ստորագրեցին հայտարարություն, ուր ասվում էր, որ հայերի ցեղասպանությունն իրոք եղել է:

Կրկին ի գիտություն Ձեզ՝ 1997թ. ցեղասպանության հետազոտողների ասոցիացիան իր նիստին ողջ կազմով քվեարկել է այն բանաձևի օգտին, որ հայերը լայնածավալ ցեղասպանության են ենթարկվել:

Չնայած ես համաձայն չեմ Ձեզ հետ, այդուհանդերձ գուցե թե Իսրայել պետության շահերը՝ Ձեր, ավելի լայն ընկալմամբ, Ձեզ պարտադրել են շրջանցել այդ հարցը և ձեռնպահ մնալ այն Թուրքիայի առջև դնելուց, սակայն ես, որպես հրեա և իսրայելցի, ամոթ եմ ապրում, որ այժմ հայերի ցեղասպանության փաստացի ժխտման մեջ Դուք այնքան հեռուն եք գնացել, որ դա հավասարազոր է հոլոքոստի ժխտման»:

Շիմոն Պերեսի՝ Հայոց ցեղասպանության հերթական մերժման առիթով նրան ուղղված իմ երկրորդ՝ 2002թ. մարտի 4-ի նամակում ես գրել եմ.

«Իսրայել պետության Արտաքին գործոց նախարարությունն. արտգործնախարար Շիմոն Պերեսին, փոխարտգործնախարար Մայքլ Մեյլչիորին, Հայաստանում դեսպան Ռիվկե Կոէնին, Հայաստանի գործերով բաժնին:

Որպես հրեա և իսրայելցի ես խորապես ամոթ եմ ապրում մեր դեսպանի և նախարարության այն դիրքորոշմամբ, որով ժխտվում է, որ հայ ժողովրդի ցեղասպանությունը, փաստորեն, ցեղասպանություն է եղել:

Այդպիսի դիրքորոշումը հավասարազոր է մեր ժողովրդի հոլոքոստի ժխտմանը:

Նույնիսկ մեր ազգային պատմության այս բավականին բարդ

օրերին, երբ այլ երկրների, ինչպիսին է Թուրքիան, աջակցությունը կարևոր նշանակություն ունի, ես չեմ գտնում, որ ուզածդ ժողովրդի ցեղասպանատիպ զանգվածային ոչնչացման պատմաբարոյական հարցերը կարող են շրջանցվել որևէ ժողովրդի, առավելապես՝ մեր հրեա ժողովրդի կողմից:

Մեծագույն մտահոգությամբ ես ի գիտություն Ձեզ կցում եմ ամերիկա-հայկական առաջատար լրագրի խմբագրական հոդվածը, որը կոչ է անում Հայաստանին՝ արտաքսել Իսրայելի դեսպանին: Նաև, ի տեղեկատվություն Ձեզ՝ այդ խմբագրական հոդվածի հեղինակը, որը գլխավորում է մեր ընդհանուր հրեական կոչին նմանօրինակ՝ ԱՄՆ-ում Հայոց ընդհանուր հիմնադրամը, երկար տարիներ ժինևում ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի անդամ էր:

Ես ուղարկում եմ Ձեզ 2000թ. հոլոքոստով զբաղվող 126 գիտնականների՝ հայերի ցեղասպանության ընդունման մասին հայտարարության պատճենը: Ստորագրողների թվում էին Իսրայելում հոլոքոստի առաջատար մասնագետ, պրոֆեսոր Իեգուդա Բաուէրը և Նոբելյան մրցանակի դափնեկիր, հոլոքոստի վերապրած Էլի Վիզելը:

Արդյոք չե՞ն տուժի Միտնի արժեքները՝ սեփական ժողովրդի զանգվածային ցեղասպանության ու սպանությունների մասին հիշելիս միշտ ու վրդովմունք ապրող մարդկանց նվաստացնող մեր հաշվենկատ քաղաքականությունից: [Սա ասվում է] այն աղոթքի հետ միաժամանակ, որ կոչում է ուժ և կորով տալ մեր ժողովրդին մեր երկրում մի այնպիսի վտանգավոր ժամանակ, երբ մենք, պաշտպանվելով, պայքարում ենք մահացու, նույնիսկ ցեղասպանատիպ ահաբեկչության դեմ, որ հարվածներ է հասցնում առանց ընտրության, այդ թվում նաև սրճարաններում նստած երիտասարդներին, ամբողջ ընտանիքներին՝ տղամարդկանց, կանանց և երեխաներին, որ հարսանիք և կամ իրենց երեխաների հաստատումն էին տոնում»:

Ինչպես վերևում նշեցինք, այդ երկու նամակներից առաջինում ես վկայակոչում էի գիտնականների երկու շատ կարևոր բանաձևեր, որոնք հաստատում էին հայերի ցեղասպանության անվիճելի փաստը: Առաջին բանաձևն ընդունվել էր մեծաթիվ գիտնականների, հոլոքոստի կոնֆերանսի 126 մասնակիցների կողմից (ի դեպ՝ մեծամասնությունը, եթե ոչ՝ բոլորը, հրեաներ էին):

Հարկ է մեջբերել նաև 126 գիտնականների ստորագրած բանաձևը, որն ընդունվել է Ֆիլադելֆիայի (ԱՄՆ) կոնֆերանսում, 2002թ. մարտի 3-5-ը: Ահա այն:

2000թ. մարտի 3-7, Պենսիլվանիայի նահանգի, Ֆիլադելֆիայի Սանտ-Ջոզեֆի համալսարանում՝ հոլոքոստի և եկեղեցու հարցերով մասնագետների 30-րդ կոնֆերանսի մասնակիցները՝ համալսարանական ամբիոններ և հոլոքոստի գիտնահետազոտական կենտրոններ ղեկավարող՝ հոլոքոստի հարյուր քսանվեց մասնագետներ, ստորագրել են հայտարարություն, որով հավաստում են, որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կատարված հայերի ցեղա-

սպանությունն անվիճելի պատմական փաստ է և, համապատասխանորեն, կոչ են անում Արևմուտքի ժողովրդավարական երկրների կառավարություններին ընդունել այն, որպես այդպիսին: Ստորագրողները (այդ թվում՝ Նոբելյան մրցանակի դափնեկիր, կոնֆերանսի հիմնական զեկուցող Էլի Վիզելը) նաև խնդրում են արևմտյան ժողովրդավարական երկրներին՝ Թուրքիայի կառավարությանը և պառլամենտին կոչ անել, որպեսզի նրանք ի վերջո հաշտվեն թուրքական պատմության այդ մռայլ էջի հետ և ընդունեն հայերի ցեղասպանությունը: Դա Թուրքիայի ժողովրդավարացման գործընթացի համար կարևոր խթան կհանդիսանա»:

Ի թիվս ստորագրողների. Իեգուդա Բաուէր՝ Հոլոքոստի միջազգային հետազոտական ինստիտուտի տնօրեն, Երուսաղեմ. Իսրաել Չարնի՝ Հոլոքոստի և ցեղասպանության ինստիտուտի տնօրեն, «Ցեղասպանության հանրագիտարանի» գլխավոր խմբագիր, Երուսաղեմ. պրոֆ. Ստիվեն Ֆայնստայն՝ Մինեսոտայի ամերիկյան համալսրանի՝ հոլոքոստի և ցեղասպանության հետազոտությունների կենտրոնի տնօրեն. պրոֆ. Սաուլ Ֆրիդման՝ Օհայո նահանգի Յանհստաունի համալսարանի հոլոքոստի և հրեական խնդիրների հետազոտությունների տնօրեն. պրոֆ. Էդուարդ Հաֆնի՝ Վալպարասիոյի համալսարան, Չիլի. պրոֆ. Դորոտա Հլովակա՝ Հալիֆակսի քաղաքական համալսարանի քոլեջ, Կանադա. պրոֆ. Ստիվեն Կաֆ՝ Բոստոնի համալսարանի իուդիզմի հետազոտությունների կենտրոնի տնօրեն. դոկտոր Էլիզաբեթ Մաքուելլ՝ հոլոքոստի մասնագետների միջազգային կոնֆերանսի նախագահ, Լոնդոն. պրոֆ. Էլի Վիզել՝ ԱՄՆ-ի՝ հոլոքոստի մեմորիալ խորհրդի հիմնադիր և ղեկավար և այլք...

Ուշադրության է արժանի նաև հղումը ցեղասպանության միջազգային ասոցիացիայի գիտնական-մասնագետների բանաձևին: Ըստ էության, համառոտ այդ բանաձևը հայտարարում է, որ համաշխարհային համարում ունեցող ցեղասպանագետներին միավորող այդ կազմակերպությունը դույզն իսկ չի կասկածում հայերի ցեղասպանության եղելության վերաբերյալ: Ահա այդ բանաձևի տեքստը:

«Ցեղասպանության հետազոտողների ասոցիացիայի բանաձևը. 13 հունիսի 1997թ.

Ցեղասպանության հետազոտողների ասոցիացիան իր՝ Մոնրեալում 1997թ. հունիսի 13-ին կայացած կոնֆերանսում կրկին հավաստում է, որ 1915 թվին Թուրքիայում հայերի զանգվածային սպանությունները ցեղասպանության փաստ է, որ համապատասխանում է ՄԱԿ-ի՝ ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի կոնվենցիայի դրույթներին: Ասոցիացիան դատապարտում է թուրքական կառավարության և նրա պաշտոնական և ոչ պաշտոնական ներկայացուցիչների ու կողմնակիցների կողմից հայերի ցեղասպանության ժխտումը»:

Կալիֆորնիայի նահանգի՝ հայերի ցեղասպանության հետազոտությունների կենտրոնի տնօրեն Ռիչարդ Կլոյանը կծու կերպով ի մի է բերել Իսրայելի՝ հայերի ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու ցանկության բացակայությունը:

«Ես կարող եմ պատկերացնել այն վրդովմունքը, երբ մեղադրանքն ուրիշին վերաբերեր: Երևում է՝ հոլոքոստը ոմանց ոչինչ

էլ չի սովորեցրել: Ես անհավանական ու տարօրինակ եմ գտնում, որ ինչ-որ մեկը, առավելապես հրեան, քաջալերեր Հիտլերին, նրա 1939թ. ասված «Ո՞վ է այժմ հիշում...» խոսքերի համար: Մի՞թե մարդիկ դեռ քիչ են վճարել աշխարհի այդ մոռացկոտության համար: Էլ ուրիշ ովքե՞ր, եթե ոչ հրեաները պետք է հիշեն, թե ինչ է ասել Հիտլերը և դրանից հետո անպատժելի գործել՝ աշխարհում երկրորդ սարսափելի ոճիրն իրագործելու համար:

Չնայած Շիմոն Պերեսը և Ռիվկա Կոհենը կարող են դա չտեսնել, ես կարող եմ, անշուշտ, տեսնել թե ինչպես են հոլոքոստի հետևանքով զոհված վեց միլիոն հրեաները տարակուսած շարժում գլուխները:

Խոսքերը չեն կարող նվազեցնել սարսափը, հարություն տալ մահացածներին կամ վերակենդանացնել ցեղասպանության մղձավանջի ընթացքում ոչնչացված այդքան բազմաթիվ մարդկանց տաղանդն ու ունակությունները: Լոկ մեր հիշողությունը հանդես է գալիս որպես անհայտացած մի աշխարհի լռելյայն խորհրդանիշ, այն աշխարհի, ուր ինչ-որ ժամանակ տեղ կար և՛ երազանքին, և՛ պատանեկության ու գեղեցկության համար, քանզի ցեղասպանության բնապատկերն ամուլ է: Մենք՝ ցեղասպանության զոհերի սերունդները, կարող ենք լոկ հարգանքի տուրք մատուցել նրանց հիշատակին, ոչ միայն այն պատճառով, որ ցավ ենք ապրում, այլ նաև՝ որովհետև դասեր պետք է քաղենք տեղի ունեցածից՝ եթե մենք ուզում ենք գոյատևել՝ որպես մարդկային ցեղ: Դա այնքան էլ մեծ բան չէ, բայց դա այն ամենն է, ինչ մենք կարող ենք անել»:

ՄԵՆՔ ՇԱՀՈՒՄ ԵՆՔ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՑԱՌՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

Հուրախություն մեզ՝ ճիշտ կլինի եզրակացնել, որ ողջ արևմտյան աշխարհում, ընդհանրապես՝ մշակութային գործընթացի և ճշմարիտ պատմության մակարդակում մենք շահում ենք հայերի ցեղասպանության բացառման և բացառողների դեմ համառ ճակատամարտը:

Հասարակական գիտությունների գրականության մեջ մենք հաջողությամբ որոշակիացրել ենք հայերի ցեղասպանության բացառման թուրքական սխեման, այն նպատակով, որ ոչ մի իրեն հարգող պատմաբան, սոցիոլոգ կամ մտավորական անտեղյակ չլինի անպատշաճ, տոտալիտար գրաքննության մեթոդների, հայերի ցեղասպանության իրողությունը կասկածի տակ դնելու նպատակով տեղեկատվության ճնշման մասին: Մշակութային կյանքում մյուս կարևոր իրադարձությունը դա վերջերս պարգևի արժանացած՝«Ցեղասպանության հանրագիտարանի» լույսընծայումն է: Գուցե թե առաջին անգամ անգլերեն հրատարակվող հանրագիտարաններից մեկը տալիս է հայերի ցեղասպանության, որպես փաստացի և ակնհայտ իրողության, ընդունման ստույգ չափորոշիչները, ընդգծում է, որ XX դարի այդ առաջին լայնածավալ ցեղասպանությունը որոշակիացրեց հետագա ցեղասպանությունների և էթնիկական մաքրագործումների (ներառյալ հոլոքոս-

տը) մոդելը, ցույց է տալիս թե ինչպես էր կառավարությունը մի քանի տարիների ընթացքում հետևողականորեն նախապատրաստում և անխղճորեն իրագործում այն: Շատ կարճ ու կարևոր որոշ ժամանակահատվածից հետո, երբ թուրքական կառավարությունն ինքը ռազմական տրիբունալի դատին էր հանձնել ցեղասպանության հանցագործներին, այդ նույն կառավարությունը սկսեց վարել իրադարձությունների ճշմարտության մերժման քաղաքականություն, քաղաքականություն, որը շարունակվում է ընդհուպ մինչ օրս այն նպատակով, որպեսզի, ինչպես գտնում են ցեղասպանության բազմաթիվ մասնագետներ, *մերժումը դառնա հետևողական ցեղասպանության վերջին փուլը*: Հայերի ցեղասպանության ընդունման ուղղությամբ ձեռքբերումների համար խրախուսանքի ենք արժանի մենք բոլորս և, առաջին հերթին, հայկական համայնքը, որը, ըստ իս, նպատակաուղղված և բացառիկ խելամտորեն ի խորոց սրտի գիտակցում է իր տառապյալների հիշատակը մոռացության չտալու և բացառողների առջև զենքերը վար չդնելու իր սուրբ պարտականությունը, չնայած ի սկզբանե այդ բացառողները մեծ հնարավորություններ ունեին: Դա այն դեպքն էր, երբ կառավարության հզոր միջոցներն ուղված էին, և ուղղված են, մեր դեմ՝ ի պաշտպանություն բացառողների: Թուրքիան այդ նպատակներին բազմամիլիոն դոլարային միջոցներ էր հատկացնում և օգտագործում էր իր բավականին էական ազդեցությունն այլ պետությունների վրա, խաղարկելով նրանց հետ բազմամիլիոն դոլարային գործարքներն ու նրանց ռազմական ռազմավարական շահագրգռությունները:

Այդպես օրինակ՝ Թուրքիան սպառնում էր չկայացնել ՆԱՏՕ-ի զորավարժությունները, եթե Ամերիկայի միացյալ նահանգները որոշում ընդունեն բոլոր ցեղասպանությունների զոհերի օրենսդրորեն սահմանված հիշատակի օրը նշել նաև հայերի ցեղասպանությունը (ԱՄՆ-ն տեղի տվեց). Թուրքիան սպառնում էր չեղյալ հայտարարել Ֆրանսիայի հետ կնքած զենքի մատակարարման պայմանագրերը, եթե ֆրանսիական սենատն ընդունի հայերի ցեղասպանության փաստը (Ֆրանսիան չընկրկեց). Թուրքիան սպառնում էր Իսրայելին, որ եթե նա ընդունի հայերի ցեղասպանությունը, ինքը չի մասնակցի համատեղ զորավարժություններին և ի չիք կհայտարարի ջրամատակարարմանը վերաբերող համաձայնագրերը (Իսրայելը տեղի տվեց):

Այդ պայմաններում, երբ բախվում ենք թուրքական կառավարության կողմից այդպիսի հզոր ուժին ու ճնշմանը, ու երբ տեղի են տալիս և Թուրքիայի հետ համագործակցության են գնում մի շարք այլ պետություններ, որոնց թվում Իսրայելն ու ԱՄՆ-ն, որոնցից մենք հարկ է սպասենք ավելի շատ աջակցություն զոհեր տված հայ ժողովրդին և նրա բոլոր դաշնակիցներին, հեշտ է թևաթափ լինել և տեղի տալ: Իրականում տեղի ունեցավ լրիվ հակառակը: Չնայած պատմության փաստագրական վկայությունները և հասարակագիտական գիտությունները քաղաքական և ֆինանսական առումով այնքան ուժեղ չեն, որքան Թուրքիայի հետ անվտանգության հարցերով համաձայնագրերն ու խոշոր առևտրական պայմանագրերը, կարծում եմ՝ պատմական ճշմարտության ուժն ու հոգևոր արժեքները, վերջին հաշվով, կհաղթեն:

Այսուհանդերձ պետք չէ թերագնահատել ժխտողների ուժն ու հնարավորությունները: Նրանք, ակնհայտորեն, ունակ են և հնարավորություններ ունեն ուժասպառ անել մեզ ու դիմել մեծածախս իրավաբանական քաշքշուկների, որոնք կարող են լուրջ խնդիրներ առաջացնել: Դեբորա Լիպշտադի և նրա աջակիցների մեծությունն այն էր, որ երբ արխիսեմիտ և հոլոքոստը ժխտող Դեվիդ Իրվինգի կողմից Լիպշտադի դեմ մեծածախս դատական գործ հարուցվեց, վերջինս չընկրկեց, ընդունեց մարտահրավերը և պայքարի մեջ մտավ պարկեշտության թշնամու դեմ: Այսուհանդերձ, երբ արդեն իսկ սկսվել էին դատական լսումները, տեղի ունեցավ, գոնե, մի դեպք, երբ հրատարակիչը, վախենալով Իրվինգի և մյուս ժխտողների կողմից հարուցված դատական քաշքշուկներից, հրաժարվեց հրապարակել մի փաստաթուղթ, ուր խոսվում էր հոլոքոստը և հայերի ցեղասպանությունը ժխտող գիտնականների մասին: Հայտնի չէ՝ Իրվինգի ցնցող պարտությունից հետո այդպիսի բան տեղի կունենա՞ թե ոչ, բայց պետք չէ զարմանալ, եթե այդպիսի բան տեղի ունենա: Մեզնից նրանք, ովքեր պիտի պայքարեն ուզածդ ցեղասպանության ժխտողների դեմ, պետք է պատրաստ լինեն պայքարի մեջ մտնել դժվար պայմաններում, որոնք մեզնից կպահանջեն ընդդիմախոսների կրակի ներքո հրապարակային ելույթների ունակություն, այդ դժվար պայմանները փորձության կենթարկեն հանրության՝ ֆինանսապես և բարոյապես մեզ օգնելու պատրաստակամությունը:

Վերջում, որպես ուղեցույց ժխտողների դեմ մեր շարունակվող պայքարի, հարկ եմ համարում մեջբերել մի քանի տարի առաջ Վիեննայում տեղի ունեցած կոնգրեսում իմ հայտարարությունը:

ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ:

• Ես խորապես մերժում եմ ուզածդ, յուրաքանչյուր և բոլոր զանգվածային սպանությունները, որոնք փաստագրվել կամ հաստատվել են դրանք իրոք ապրած անձանց՝ ճանապարհորդների, ռեպորտյորների և լրագրողների, դիվանագետների կամ պատմաբանների կողմից:

• Ես վճռականորեն հանդես եմ գալիս Լեմկինի կողմից առաջարկված բնութագրմամբ՝ ցեղասպանության՝ մասնակի թե լրիվ զանգվածային սպանության, ուզածդ դեպքի ժխտման դեմ: Տարբերակված ենթադասակարգման համար անհրաժեշտ է ցեղասպանության տարբեր ձևերի (այնպիսիք, ինչպիսիք են կանխամտածված ցեղասպանություն, կրոնական հողի վրա՝ ցեղասպանություն, գաղութատիրության ընթացքում ցեղասպանություն, պատերազմի ընթացքում ցեղասպանական բնույթի ցեղասպանություն, բնապահպանական ցեղասպանություն և այլն) մասին գիտության և օրենքի առկայությունը:

• Բացառվում է ուզածդ ցեղասպանական զանգվածային սպանության հնարավորությունը:

• Ես վճռականորեն հանդես եմ գալիս ուզածդ ցեղասպանա-

կան զանգվածային սպանությունը որպես լոկ մեծ կամ փոքր ողբերգություն բնութագրելու դեմ:

• Ես վճռականորեն հանդես եմ գալիս իմ սեփական կամ որևէ այլ ստույգ ժողովրդի նկատմամբ հանցագործությունների շուրջ իրարանցում ստեղծելու դեմ, երբ չի ընդունվում կամ ըստ ամենայնի ցավակցություն և վրդովմունք չի հայտնվում ուզածդ մի այլ ժողովրդի ցեղասպանության առիթով:

• Ես վճռականորեն հանդես եմ գալիս ցեղասպանության այն տիպի գիտական ուսումնասիրության դեմ, որը աչքի չի ընկնում բարոյական հավասարակշռությամբ, որն իր վրա կրում է կայսերապաշտական մոտեցման ինքնամեծարման կնիքը և նվաստացուցիչ կերպով նվազեցնում է մի այլ ժողովրդի ինքնատիպությունն ու նշանակալիությունը:

• Ես վճռականորեն հանդես եմ գալիս ցեղասպանության ուսումնասիրության ժամանակ այն բոլոր հայտարարությունների դեմ, որոնք հովանավորչական կեցվածքով անհարգալից կերպով վիրավորում են ուզածդ կոլեկտիվ խմբակցությանը կամ ժողովրդին, բնութագրելով հանցագործություններ կատարածներին որպես անբարեվարք անազնիվների ի սկզբանե դատապարտված մի խումբ, որն իր ժողովրդի կատարած չարիքի շրջանակներում լոկ բացառություններ են և այդպիսիք են դարձել, որովհետև այդ ժողովրդի էվոլյուցիայի ընթացքում զրկված են եղել ավելի մարդասեր լինելու հնարավորությունից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Առավել մանրամասն տես՝ Astourian, Stephan (1990) The Armenian Genocide: An Interpretation. The History Teacher, 23(2), 111-160.

Թարգմանությունը՝ Էմիլ Դանեղյանի

Р е з ю м е

Правовая память Геноцида армян и историчность геноцида исключают политическую расчетливость и целесообразие.

Исраель Чарни

Статья известного еврейского общественного деятеля, директора института Холокоста и геноцида Израел Чарни (статья составлена на основе доклада автора на международной конференции в Москве) доказывает, что позиция еврейской интеллигенции к факту Геноцида армян кардинально отличается от позиции официальных кругов Израеля. В статье вводится в оборот ряд

документов и объявлений, авторы которых известные геноцидоведы еврейской и других национальностей, и которые доказывают все историческое и моральное банкротство позиции официального Израеля. Эти документы ставят вопрос, как первый шаг, о необходимости принятия факта Геноцида армян.

Summary

The Legal Remembrance of the Armenian Genocide and the Historicity of the Genocide Exclude the Political Prudence and Expediency.

Israel Charny

An article of the famous Jewish public figure, the executive director of the Institute on the Holocaust and Genocide (the article is based on the author's paper at the international conference in Moscow) shows, that there is a fundamental difference between the Jewish intellectuals' and Israeli official quarters' position on Armenian genocide. Some documents and declarations of the famous Jewish and other nationalities genocide scholars are put into circulation, which are proving the historical and moral insolvency of the official position of Israel. These documents, as a first step, are putting the question of the recognition of Armenian genocide.